


ՇՏԵՄԵՐԸՆ

ՊԻՏՆՆԻ ՊԻՏՆԵԼԵՆՅ

ՇՏՈՒ 5

ՄԱՐՏԻ 1 1845

ԹԻՒ 58



Ս ինտերիւրն իւրը հրատարակող և գրասենյակն սպասարարը :

Սենտիկ քաղաքը, որ ատեն մը իր համանուն շասարակապետութեանը մայրաքաղաքն էր, շինուած է 72 փոքր կղզիներու վրայ Մարտիական ծովուն ծոցին մէջ: Ըստ կղզիները մէկըմէկէ կը բաժնուին նեղ ջրանցքներով, որոնք քաղաքին փողոցները կը ստեղծեն, և սա ջրանցքներուն վրայէն բազմաթիւ կամուրջներով մէկմէկու կապած են կղզիները, նաև իւրաքանչիւր կղզին շէնքերը նեղ փողոցներով կը զատուին մէկըմէկէ. ջրանցքներուն բովերը տեղ տեղ թումբեր ալ կան: Սենտիկի

մէջ կառքեր և ձիեր չեն տեսնուիր, որովհետև քաղաքին փողոցներուն շատը ջուր ըլլալով անպիտան են. այլ անոնց տեղը խոտով ըստուած նաւակները կը գործածուին, որ ամէն ատեն քաղաքին ամէն կողմը կը զանուին:

Բոլոր քաղաքը ութը միոնի չափ շրջապատ ունի, և երկու կտոր բաժնուած է մէկ մեծ ջրանցքով* մը, որ մնացեալ ջրանցքներուն ամենէն երեւելին է. ասոր վրայ է Ռիալթոյ ըստուած մեծ կամուրջը, որ բոլորը մէկ կամար մըն է, և վրան եր-

*Canal grande.

կու կողմը քսանըջորտական քարաշէն խա-
նութներ կան :

Վ Ենետիկ կրպարունակէ 149 ջրանցք .
386 կախուրջ . գրեթէ 2,000 մեծ և փոքր
փողոցներ . 28,000 տուն . և 104,000 բնա-
կիչ : 1789ին՝ Հասարակապետութեանը վեր-
նայէն աւաջ Վ Ենետիկի ժողովուրդին թի-
ւը 139,000 էր :

Քաղաքին ամենէն գեղեցիկ կողմը Աըր-
ւոյն Աարկոսի թաղն է , ուր տեղ Ս . Մար-
կոսի հոյակապ տաճարը կայ իր բարձր
զանգակատունովը . աս տաճարին առջևը մէկ
մեծ և գեղեցիկ հրապարակ մըն է որ կա-
մարներ , սրճարաններ և գեղեցիկ ճեմերը
մը ունի . հոն է նաև դուքսին պալատը ,
որ նախնի կառավարութեան բնակարանն
էր , և կըստարունակէ Հասարակապետու-
թեան ժամանակի զանազան ատենաներուն
սրահները : Ըս պարտին մէջն է Ս . Մար-
կոսի զրքատունը , որուն մէջը 65,000 հա-
տար գիրք և 5,000 ձեռագիրներ կան :

Փոքր հրապարակը՝ որ պատկերին մէջ
կրտեսնուի , յիշեալ մեծ հրապարակին
ճիշդ բովը կիյնայ , և մէկ կողմը դէպի
ծովը բայ է . ասոր մէջ երկու կրանիթ
քարէ սիւններ կան՝ որոնք ժքերորդ դարուն
հունաստանէն բերուելով հոն կանգնած
են : Ըս սիւներուն մէկուն վրայ սղնձէ
ձուրած թևաւոր աւիւծ մը կայ , որ Վ Ե-
նետիկի նախնի Հասարակապետութեանը
շանն էր . մէկալին վրայ Ս . Թէոդորոս զը-
րաւարին մարմարիոնէ արձանը , որն որ
նոյն տէրութիւնը իրեն սաշտպան ըրած
էր :

Սեծ ջրանցքին երկու կողմը փառաւոր
պալատներ կան , որոնք Վ Ենետիկի ազնուա-
կաններուն բնակարաններն էին . հիմայ
մէկ քանին կառավարութեան ձեռքն է .
մէկալները վարձքով օտար տէրութեանց
դեսպաններուն տրուած են : Ըս պալատնե-
րուն քանի մը հատը խիստ գեղեցիկ նկար-
ներով և քանդակներով զարդարուած են :

Հասարակապետութեան զօրացած ժա-
մանակը շատ անուանի էր նաւարանը , որ
1304ին շինուած է . 16,000 զորձաւորներ
կըրանէին անոր մէջ , բայց հիմայ առջի
չբեղութիւնը չունի և միայն 1,000 հոգի կը
գտնուին , որոնց կէսը յանցանաւորներն :

Վ Ենետիկի վաճառականութիւնը՝ որ եր-
կար ատենէ՛ ՚ի վեր ինկած էր , հիմայ վերջա-
տին ծաղկելու վրայ է . իր նաւերը բոլոր
Միջերկրական ծովուն վրայ երթեկու-
թիւն կընեն : Վ Ենետիկ և Բեօճա քաղա-
քը 126 վաճառականի մեծ նաւեր և 7,000
աւելի փոքր նաւեր ունին : Վաւահանդատին
մէջ տարին 1200—1300 մեծ և փոքր նաւեր
կըմտնեն :

Փոփ Բանաստեղծին շունը :

Փօփ անգղիացւոյ հռչակաւոր բանաս-
տեղծին՝ անգամ մը իր շանը ձարտա-
րութիւնովը սպանուելէն ազատուելուն եղա-
նակը յիրաւի նշանակելու արժանի է : Ըս
կենդանին՝ որ Մարքէզ կըկոչուէր , ամենեւին
աղէկ չէր երթար իր տէրոջը մէկ սիրելի
ծառային հետ . միշտ կըմուսուար երբոր
ծառան իրեն մօտ տեսնէր , և որ ատեն ա-
նիկայ իր քովը զար իր բարկութեանը նշան
ակուաները կըցուցընէր : Բանաստեղծը
թէպէտ շատ կըսիրէր աս շունը , (որ որոյ
շուներուն ամենէն մեծ տեսակէն էր) բայց
ինքը չափազանց մաքրասէր ըլլալուն , բնաւ
չէր թողուր որ շունը գիշերը իր սենեակը
մնայ . այսու ամենայնիւ շունը շատ անգամ
սաստիկ հրամաններուն դէմ , իրիկունները
զաղտուկ կըմտնէր իր տէրոջը սենեակը ,
ուրկէց շատ մեծ դժուարութեամբ դուրս
կըվանտէին զանիկայ :

Սէկ իրիկուն մը՝ շունը կամաց մը ներս
մտնելով , առանց տեսնուելու զնայ իր տէ-
րոջը անկողինին տակը պառկեցաւ և հոն
մնաց : Ըստուան դէմ ծառան վազելով
փօփին սենեակը մտաւ . նոյն րոպէին , շու-
նը յանկարծ ցաթիկեց տեղէն յարձակեցաւ
անողամ ծառային վրայ , որ ձեռքը ատրձա-
նակ մը ունէր : Բանաստեղծը աս աղմու-
կէն արթննալով , բացաւ պատուհանը որ
պօռայ օգնութիւն կանչէ , և ահա պարտե-
ղին մէջ իրեք աւազակ տեսաւ , որոնք իր
ծառային ձեռքովը հոն մտեր էին զինքը
սպաննելու և տանը մէջ եղածը թալելու :
Գողերը աս անակնկալ զիպուածը տեսնե-
լով՝ առանց վայրկեան մը անցունելու ձգե-
ցին փախան : Չար ծառան աչալուրջ շա-
նը ձարտարութեամբը այսպէս մատնուե-
լով՝ վճուռեցաւ որ սպանուի :

Աս նշանաւոր զիպուածէս քիչ մը ետքը, նոյն շունը՝ իր ունեցած բնական ազդեանք մէկ ուրիշ փորձն ալ յայտնեց: Մէկ օր մը փօփ՝ կէս օրէն ետե տունէն տասներկու մղոն հեռու պզտիկ անտառի մը մէջ քնանալով, կորսնցուց իր ծանրագին ժամացոյցը՝ որն որ Մեղրեայի Թագուհին բնծայած էր իրեն: Տուն դառնալու տունը, փօփ ուզեց որ ժամը նայի, բայց ժամացոյցը գրպանին մէջը չգտաւ. վրան երկու կամ երեք ժամ անցած էին, և սաստիկ մըրիկ մը սկսելու վրայ էր:

Բանաստեղծը կանչեց իր շունը և մէկ նշան մը ընելով, որն որ Մարքէզ շատ աղէկ հասկըցաւ, իրեն ըսաւ. «Իմ ժամացոյցս կորսնցուցի. դնա՛ փնտուէ զանիկայ՞»: Ին խօսքին շունը մեկնեցաւ, և անշուշտ գընաց իր տերօջը նստած տեղուանքը փնտուեց: Ինանկ պատահեցաւ որ խեղճ կենդանին շատ երկար ատեն ժամացոյցը փնտուելու պարտաւելով ատենը անցաւ, և կէս զիշեր եղած էր բայց անիկայ դեռ տուն չէր դարձեր: Ինչ մեծ զարմացում և ուրախութիւն ունեցաւ փօփ, երբոր առաւօտուն ելելով, բացաւ իր սենեակը և դրանք քով դտաւ իր հաւատարիմ շունը հանդիստ պաւկած, իր բերանը ունենալով ան փառաւոր ժամացոյցը՝ որն որ գտեր դարձուցեր էր կատարեալ անվնաս, և որ չափազանց յարգի էր բանաստեղծին:

Օ՛րէ՛տը:

Ին բերկրութիւնը՝ որ մէկալներուն ծիծաղը ակնեկէն առաջ կուգայ, հասարակ պատճառ մըն է ծիծաղելու, ու շատ դժուարին է անոր հաշորդ չըլլալը, մանաւանդ առանց դիտարու աւնոց ուրախութեան պատճառը:

Մեղրեայի մէջ ճամբորդութիւն ընողին մէկը կրէ թէ, «Արբոր օր մը Վճտրայի փողոցներուն մէկէն կանգնէի, քանի մը ծխնելոյզ՝ մարբողներ տեսայ, որ յանկարծակի իրիք Չինացիներու հանդիպեցան, որոնք նոր եկած էին ան երկրէն: Հայտնի էր որ ան Չինացիները բնաւ ծխնելոյզ մարբողներ տեսած չէին առաջ, ու ասոնք ալ, մինչև ան վայրկեանը Չինացիի զարմանալի կերպարանք տեսած չէին. ուստի երկու կողմէն սկսան իրարու վրայ ծիծաղել, ու ան փողոցէն անցողներն ալ առանց պատճառը դիտնալու իրենք ալ կը ծիծաղէին»:

() ճագ սի-կի-բի-ճի :

Մարբողն որտեղիւն էր բնակուած գիտութեանն անհասարակութիւնը:

§ 3

Մարդոց մէջ արդարութիւնը ու անիրաւութիւնը կլինայի զօրութիւնովը կը փոխուի: Արեք աստիճան աշխարհադրական լայնութեան հեռաւորութիւնը բոլոր իրաւագիտութիւնը կը խանգարէ: Մէկ միջօրեական շրջանակ մը կամ քանի մը տարուան ժառանգութիւնը իրաւունքը կը օրոշէ: Հիմնական օրէնքները ևս փոփոխութեան ենթակայ են. անանկալ իրաւը ժամանակէն կախում ունի: Հիւրաւի ծիծաղաշարժ արդարութիւն մըն է, որ մէկ զեռ մը կամ լեռ մը կրնայ իրեն սահման դնել. ու ինչ որ ճշմարիտ է Պիրենեան լեռներէն ասդին, սխալ կը համարուի անդի ի կողմը:

§ 4

Մեր երեւակայութիւնը այնքան կը մեծցունէ ժամանակը, շարունակ անոր վրայ մտածելնուս համար, ու այնքան կը պզտիկցունէ յաւիտենականութիւնը բնաւ անոր վրայ չխորհելնուս պատճառաւ որ յաւիտենականութիւնը մեր աչքին ոչինչ մը կերենայ, ու ոչինչը յաւիտենականութիւն. և աս ամէնը անանկ խոր արմատներ ունի մեր ներսիդին, որ մեր ամէն հանձարովը չեմք կրնար անկեց պաշտպանուիլ:

§ 5

Կարծիքին դիտար գործիքներուն մէկը կամքն է. չէ թէ ասիկայ է կարծիքը հաստատողը, այլ թէ իրերը ճշմարիտ կամ սուտ կերենան՝ իրենց ան երևոյթին համեմատ որ կը տեսնենք: Կամքը՝ որ աւելի մէկ կողմին կը հաճի բան թէ մէկալին, միտքը կը դարձունէ ու չթողուր որ քննէ ան կողմի որպիսութիւնները որ ինքը չսիրեր. ասանկ է միտքն ալ, համընթաց ըլլալով կամքին հետ՝ կրնայի միայն ան կողմը որ կը սիրէ. և տեսածէն դատողութիւն ընելով՝ առանց զգալու կրկանեմաւորէ իր կարծիքը կամքին յօժարութեանը համեմատ:

§ 6

Շատ ստոյգ բաներ կան որոնց դէմ կը զըռցուի. շատ սուտ բաներ ալ կան որոնց հակառակութիւն ընող մը չկայ: Ուրեմն ոչ հակասութիւնը ստութեան նշան է և ոչ

անհակասութիւնը ճշմարտութեան նշան :
§ 10

Գիտութիւնները երկու ծայր ունին որ մէկը մէկու կը դադարէ . առաջինն է զուտ բընական տգիտութիւնը որուն մէջ կը գտնուին մարդիկ իրենց ծնած ատենը : Իսկ միւս ծայրը ան է ուր կը հասնին իմաստունները , որ մարդկային գիտութիւններուն բոլորն ալ սորվելէն ետե կըրտանեն որ բան մը չեն գիտեր , ու ան նոյն տգիտութեանը կը հասնուին ուսկէց որ հեռացեր էին : Բայց ասիկայ իմաստուն տգիտութիւն մըն է , որ զինքը կը ճանչնայ : Իսկ անոնք որ բնական տգիտութեանէ ելելու ու չեն կըրցեր միւսին հասնիլ , հարեանցի ծանօթութիւն մը ունին գիտութեան վրայով ու ինքզինքնին զիտունի տեղ կը դնեն : Բնա ասոնք են որ աշխարհը կը վըրդովեն , և ամէն բանի վրայ ուրիշներէն աւելի սխալ դատողութիւն կընեն : Հասարակ ժողովուրդը և իմաստուն մարդիկները սովորաբար աշխարհի իրաց հանգամանքները կը քննարկեն . իսկ միւսները կանարգեն աշխարհը և իրենք ալ անկէ կանարգուին :

Փաստը Գաղղիացի :

Հասարակ — Ինչն ճշտաց :

Սեծամեծ գործերու կարողութիւն ունեցող մարդոց որպիսութիւններուն գուցէ ամենէն օգտակարը և հարկաւորը ասիկայ է : Օգտաւոր յիշողութիւնը՝ ազու զգոյցութիւնները՝ կենդանի երեւակայութիւնը՝ նուրբ դատողութիւնը կընան օգտակար որպիսութիւնները ըլլալ մէկ մարդու մը . բայց ասոնց ամէնն ալ հաստատութիւն մտաց կողմէն ՚ի գործ գրուելու : Օր օրինակ արեգակին ճառագայթները առանց կիզիչ ապակիի չեն այրեր , ու ապակին նոյն ճառագայթները իր վառարանին հաւաքելու յատկութիւն չունեցած քերամութիւն չարտադրեր , ասանկ է և մտաց հաստատութիւնը որ միւս ձիրքերը մէկ տեղ կը բերէ և ազու զընթացութեամբ ՚ի գործ կը դնէ : Ոմանք բեղմնաւոր միտք ունին օգտակար գաղափարներ ծնանելու , բայց ամենեւին անպիտան են զանոնք գործի դնելու : Կընմանին ան ծառերուն որ կը բացուին խիտ առ խիտ ծաղիկներով , ու բնաւ պտուղ չեն բերեր :

Լընուակն անձն մը իր պարտեզին մէջ գեղեցիկ ծառ մը ցուցնելով մէկուն՝ կըսէ թէ միտքը զբաժ է որ պիտի կտրէ զանիկայ որովհետեւ չորս տարիէն հետէ իր պարտեզին ծառերուն ամենէն աղէկ կը ծաղիկ եղեր , բայց բնաւ պտուղ չէ բերեր : Եւս բանը ուրիշ բարեկամի մը պատմելուն պատասխան կառնէ , թէ՛ « Ի՛նչ ան է որ ծառը ինքզինքը ծաղիկով կը զգայ : Գրնէ . իմ խրատս մտիկ ըրէ , ծառին մէկ կողմէն անոր կեղևը կտրէ հանէ , ու անիկայ հաւանական է որ քիչ ծաղիկ տայ բայց պտուղ բերէ » : Եւս պէս ըրաւ ազնուակներ , ու ծառը ետքը իր պարտեզի ծառերուն ամենէն աւելի և ամենէն աղէկ պտուղ տուաւ : Արեմն ես ալ կը խրատեմ քեզ , որ քու գաղափարներուդ կեղևը քիչ մը կտրես հանես , որ միայն ծաղիկով չբացուին անոնք . հապա որ կարենան օգտակարութեան պտուղներ արտադրել : Իսահակ Վեւոն մեծ փիլիսոփային համար կըրտամեն թէ ինքզինքն վըրայով չէր կարծեր թէ ուրիշ մարդոցմէ աւելի գերազանցութիւն մը ունի , բայց միայն ասով ինչ որ կը խորհի եղեր թէ բաւական հարկաւոր է սկսելու , բաւական մը տաց հաստատութիւն ունի եղեր զանիկայ շարունակելու մինչև իր նպատակին կատարուելը : Եւսը հակառակը Սամուէլ Նճարն երեւելի հեղինակը կը խոստովանէր ու կըրտամէր թէ այնչափ կարտ է աս որպիսութեանս , որ չկրնար բան մը ընել մինչև որ չընազատուի զանիկայ ընելու կամ իր ախորժակէն կամ իր պարտաւորներէն : Չանացիք ուրեմն ձեռք ձգել մը տաց հաստատութեան ունակութիւնը :

Վախճանը Բարեգործութիւն :

Ի՞նչոք բարեգործութիւններուն առաջինը՝ ազնուագոյնը և մեծագոյնը , հիսուս Վրիստոսի վրայ հաւաքն է : Եւսնց ամէնը պէտք է որ սկէ առաջ գան : Արիշ բան չեն բարեգործութիւնները բայց և թէ հաւատոյ պտուղները , միայն անկէց է որ կընդունին իրենց բոլոր գործութիւնը : Վրիստոսնայ մը որ Եւստոնոյ վրայ հաւատք ունի , բոլոր ըրածը ազատութեամբ և ուրախութեամբ կընէ . բայց ան մարդը որ Եւստոնոյ հետ մէկ չէ , հոգով լեցուն է , ու ծառայութեան տակ է . միշտ տառապանքով իր մտքին մէջ կը մտածէ թէ որչափ բարեգործութիւն կը պահանջուի իրմէն . մէկուն մէկակին կը հարցնէ՝ ու իր սիրտին հանգիստ չգտնէր , և ամէն բան վախով կընէ ու առանց գոհ ըլլալու :

Ինչո՞ք էր ինչ զինն զայս պատճառով ինչ էր :

Խաղաղական Ովկիանոսին մէջ՝ որուն ընդարձակութիւնը երկրագունտիս մակերևութին երրորդ մասը բռնէր է, և իր ասհագին ալիքները ուրիշ արգելք մը չունին բայց եթէ ծովային աներևոյթ միջատներէն շնուած և հրաբուխներէն վեր ելած փոքրիկ կղզիներ, Ինչքէրըն* անունով կղզեակ մը կայ, որ իրաւ երևելի տեղ մը չէ, բայց իր գաղթական բնակիչներովը շատ նշանաւոր է, և մանաւանդ անոնց կարեւոր պատմութիւնովը :

Աս փոքրիկ կղզին սեպացեալ ժայռերու շեղջակոյտ մըն է. անանկ որ նաւորդներուն մակոյցները զրեթէ չեն կրնար մտնիկնալու հոն : Բայց աս ժայռերուն մէջը կան արգաւանդահող ձորեր առատ հունձերով ծածկուած. կանոնաւոր բաժանումն աղէկ մշակեալ արտերու. տեղ տեղ հսկանաւոր անտառներ. փոքր զիւզ մը՝ զիւքը յարմար և զուարճալի, որուն մէջ եւրոպական ոճով շինուած տուններ կան. հասարակաց հրապարակ մը չորս զին փառաւոր շէնքերով և վերջապէս հոյակապ շէնք մըն ալ՝ որ միանգամայն եկեղեցի, դպրոց և դատաստանարան է : Բոնց ամէնը յայտնի կրցուցնեն որ աս կղզին ժողովուրդը բոլորեկրթութեան մէջ շատ յառաջադիմութիւն բերէ է : Աւսակայն սրճափ անհաստալի կրթութի մարդուս թէ որ լա՛ն որ աս գաղթականները՝ աւազակներու և ծովու վրայ ասպատակութիւն ընող մարդոց զաւկներ են. և պատկառելի ծերունին՝ որ իրենց նահապետն է, անիկայ միայն կենդանի մնացեր է առջի աւազակներէն : Ակո՛ր ուրեմն, ո՞վ անհաստ եկո՛ր որ տեսնես թէ ինչ կարող է ընել Բստուծոյ Բանը՝ Բստուածաշունչ զիւքը, որ յոյժ խտտախրտու կամակոր մարդիկներուն բարբը անգամ կրփոխէ, ու խաղաղութիւն, միաբանութիւն և երջանկութիւն կուտայ նաև անանկ ժողովուրդի մը որ եղեռնագործութենէ յուշ եկեր է :

Յամի Տեառն 1789, ապրիլի 28ին, անգղիական նաւ մը կար Վոթօտ՝ կղզիին մտերը, որ Բարեկամաց կղզիներէն մէկն

է Խաղաղական Ովկիանոսին մէջ, ու դէպի Վլուխ Զօրնի ըսուած հրուանդանը կրնաւարկէր : Բսիկայ Սանտիչեան կղզիներէն գալով՝ Նոգղիա կը դառնար. քանզի Նոգղիական կառավարութենէն խրկուեր էր զանազան տեսակ ծաւեր բեռնաւորելու որ կուղէին Երևմտեան Նոգղաստանի մէջ տնկել : Բսնալին հրամանատարը Պլայ նաւապետն էր, որ անաչու բնութիւն մը ունէր : Բոտուանց արեւը ծագելուն՝ նաւաստիներուն մեծ մասը ապստամբելով, նաւապետին վրայ յարձակեցան որ պառկած էր իր անկողինը, ու ժով մը կապեցին և նաւուն վրայի դատիկոնը տարին. նմանապէս կապեցին զանոնք ալ որ իրենց հրամանատարը պաշտպանել կուղէին : Յետոյ մակոյցը ծովը իջուցին և աս սղորանիները անոր մէջ դրին քիչ մը պաշարով, ու ալիքներուն բռնութեանը յանձնեցին : Իսկ նաւը՝ առազաստալից հողմով կրկին ետ դարձաւ դէպի Սանտիչեան կղզիները երթալու : Իսեղճ՝ Վաւապետը՝ իր տասնըութն ընկերներովը 1200 փարսախ ճամբայ ընելով, հազարու մէկ վտանգներու մէջ իյնալէն ետև Վայմօր* կղզին հասաւ և անկեց Վնգղիա գընաց. ուր տեղ իր գլխուն եկածը պատմեց : Արտմտեցաւ ամէն մարդ չարագործներուն յանդգնութեանը վրայ, և անմիջապէս պատերազմական նաւ մը խրկուեցաւ անոնց ետևէն :

Բայց պատճառը ի՞նչ էր արդեօք, որ աս ասպտամբները անանկ յանցանք մը գործելով՝ նախատոյլից մահուան արժանի եղան : Բանդի անտոնը Սանտիչեան կըղզիներուն վայրենիները շատ անկարգութիւնով կանցունէին իրենց կեանքը. աւարինութիւնը անձանօթ էր կնիկներուն. ամուսնութեան կապ չկար մէջերնին, ու առանց ամենալու թէ օտարներուն և թէ իրենց հայրենակիցներուն հետ անառակութեամբ կապէին : Վաւաստիները Պոռնիթի նաւուն (այսպէս կը կոչուէր ան նաւը) աս դարձելի զըստանքներուն ճաշակը առած ըլլալով, շատ սրտերնին կրնեղանար անոնցմէ զըրկուելուն համար. ուստի աս մեծ յանցանքը գործեցին որ կարող ըլլան իրենց չար կիր-

* Pitcairn's Island. + Jafor Island.

* Timor Island.

քերը յազեցընել . ու անմիջապէս դարձան հոն՝ ուր տեղ երջանկութեան հանդիպելու յոյս ունէին , մէջերնուն մէկը հրամանատար կարգելով՝ որ Բնգղիայի ծովային զօրաց պաշտօնատարներէն էր . և յունիսի Յին իւրենց փափաքելի կղզիին առջևը խարխիս նետեցին :

Ասոնցմէ շատերը չէին կարծէր որ Բնգղիայի տէրութեան վրէժխնդիր ձեռքը լնտրայէն մինչև Սանտովիչեան կղզիները կարենայ երկըննալու : Աստի իրենց ընտրած հայրենիքին մէջ բնակութիւննին հաստատեցին . միայն թէ զգուշութեան համար փոքրիկ ամրոց մը շինեցին , որ եթէ վրանին յարձակող մը ըլլայ նէ պաշտպանեն զիրենք : Բայց միւսները՝ ինչպէս և իրենց նոր հրամանատարը մտածելով որ միակ ազատութեան յոյս՝ ծածուկ մնալն է , կղզեցի կնիկներէն և քանի մըն ալ այր մարդիկ հետերնին աւնելով , գիշերանց մեկնեցան անկէ , ու մէյմըն ալ անոնց վրայօք լուր չաւնուեցաւ : Բիչ ատենէն ետև անգղիական Ֆրէկաթ մը ան նաւահանգիստը հասնելով , մնացած յանցաւորները բռնեց Բնգղիա տարաւ , ուր տեղ իրենց արժանաւոր պատիժը աւելին :

Քսան տարիէն աւելի այնպէս կարծուեցաւ որ Պոննթի նաւը խորտակուեր է , և մէկ մէկու կրսէին . Կստուած պատժեց աս չարագործները , որոնց որ մարդկային արդարութիւնը չկրցաւ հասնիլ : Բնգղիայի նաւը Պրիզոն ըսուած , երբոր ան կողմերը կընաւարկէր , զիպուածով մը Բիզբերըն կղզիին պատահեցաւ : Օարմայան մնացին տեսնելով որ աս կղզիս մէջ գետինը աղէկ մշակուած է , ու ամէն բան կատարեալ բարեկրթութիւն կըրցուցընէ : Ալ աւելի շատցաւ իրենց դարմանքը՝ երբ որ տեսան որ մէկ մակոյկ մը ցամաքէն դէպի իրենց կուզար , մէջն ալ երկու գեղեցիկ երիտասարդներ կային , որ մօտիկնալով անգղիարէն խօսեցան : Հրամանատարը անմիջապէս նաւը ընդունեց զստնը . որ թէպէտ վայրենիի հագուստ ունէին վրանին , բայց իրենց խօսքէն և շարժմունքէն յայտնի կերևնար թէ ամենակն վայրենիի բարբ չունին : Կտքը կերակուր զրին ասոնց առջևը , որոնք ուտելու սկսելէն առաջ՝ աղօթքով աստուա-

ծային օրհնութիւնը խնդրեցին՝ Աստուծոյ մութեան պարգևներուն վրայ , խիստ անկեղծ և սրտաշարժ կերպով մը : Արիտասարդներուն մեծը՝ յիշեալ հրամանատարին որդին էր , և փոքրը՝ ուրիշ ապստամբի մը որդի : Պրիզոնի նաւապետը հետաքրքրութեամբ և մտերիմ սիրով լցուած , ընկերացաւ անոնց հետ մինչև ցամաքը . ուր գտաւ գաղթական ժողովուրդ մը՝ որ Կստուածաշնչէն աւնուած իմաստան օրէնքներով կըկառավարուէր . և յաջողութիւնը ու ամենաքաղցր բարեկամութիւնը կղզիին ամէն կողմը կըտիրէր : Այսին ծերունին Կզամս կենդանի մնացեր էր , իր ընկերներուն և հետերնին բերած Սանտովիչայիններուն մեռնելէն ետև : Աւաւապետը սկսաւ հարցուփորձ ընել ծերունիին , որ հետագայ կերպովը պատմեց անոր իրենց զխէն անցածները :

Չարագործները զիշեր ժամանակ Սանտովիչեան կղզիներէն ելելով , որ իրենց որ կողմ երթալին մարդ չտեսնէ , առազաստ պարզեցին դէպի Բիզբերըն երթալու որ անկէց անցնելու ատենը տեսեր էին , և իրենց հրամանատարին ալ հաճելի եղեր էր : Կս կղզին հասնելուն պէս՝ իրենց նաւը այրեցին որ չըլլայ թէ խնայուի և ձեռք անցնին : Կտքը քանի մը տուներ շինեցին և սկսան երկիրը մշակելու : Բայց անմիջապէս կռիւնի ծագեցաւ մէջերնին . ու անզուսպ կիրքերը որ արդէն մեծ յանցանք մը գործելու գրգռեցին զիրենք , ուրիշ եղիւնազործութիւններու ալ ճամբայ բացին : Բնգղիայիներուն գերի տարած վայրենիները ապստամբեցան իրենց տէրերուն դէմ որ ինք հօգի էին , և անոնց հինգը սսանեցին : Ի վերջոյ ողջ մնացողներն ալ իրենց մարդասպանները մեռցուցին . անանկ որ 1793ին չորս անգղիայիներէն ուրիշ այր մարդ չկար հոն : Բայց ասոնց երկուքն ալ շատ չանցաւ մեռան :

Ապստամբները երբոր աս կղզին ելան իրենց կարասիքներուն մէջ որ նաւէն հանելու էին , Կստուածաշունչ մը և աղօթագիրք մը կար : Կս գրքերը շատ ժամանակ բանի տեղ չզրին : Բայց իրենց թշուառութիւնը մտածմունքի մէջ ձգելով զիրենք , և մտածմունքով ալ գործած մեղքերնին զգա-

լով, երկու անգղիացիները բացին Մատու-
 ծոյ Ռանին գիրքը, և ստացան անկից ան
 լուսաւորութիւնը մտաց որ երկար ատենէ
 ՚ի վեր անարգել էին. ու սկսան առաւօտ
 և իրիկուն աստուածային պաշտամունքը ան-
 խափան կատարել: Մտնց մէկը շատ չքշեց
 բնական մահուամբ մեռաւ: Մշամս՝ մինակ
 մնալով՝ ձեռնամուխ եղաւ որ աս դաղթա-
 կանները առաքինի և խնաստուն ժողովուրդ
 մը ընէ: Վարդեց հաւատքի բերաւ ան
 կռապաշտ կնիկները որ իրենց էրկանը մեռ-
 նելէն ետե ողջ մնացել էին. դեռահասակ
 տղայքը վարժեց, և Մատուծոյ երկիւղը ու
 կրօնագիտութիւնը սորվեցուց անոնց: Մս-
 կէ գատ՝ օրէնքներ ալ դրաւ աս կղզիին
 նահապետը, իր խոհական զատողութեամբ
 բը և Մատուածաշնչէն առնելով: ՚ի վերջոյ
 ժողովրդական կառավարութիւն մըն ալ
 հաստատեց, ու մէջերնէն մէկը գլուխ դրաւ
 անոնց, որ տարին անգամ մը ուրիշ մէկը
 ընտրուելով կրփոխուի ան:

Պրիզոնի նաւապետը ասոնք լսելով՝ հա-
 զիւ թէ իր տեսածներուն կըհաւատար.
 բայց ասիկայ էր ստոյգ պատմութիւնը:
 Մյո՛, աւազակներու որդիները՝ առաքինի
 մարդիկներու փոխուէր էին, և ան ալ՝ մի-
 նակ Մատուածաշնչով: Վարեկարգութիւնը՝
 ճարտարութիւնը և արդարութիւնը կըթա-
 գաւորէր իրենց մէջը: Մաւաօտ և իրի-
 կուն ամէնքը մէկ տեղ հաւաքելով միաբա-
 նութեամբ իրենց Ստեղծողին երկրպագու-
 թիւն կրմատուցանէին: Արիակին՝ սուրբ օր
 մըն էր անոնց, որն որ բոլորովին Մատու-
 ծոյ Ռանը լսելու և սորվելու կընուիրէին:

Ան ժամանակէն մինչև հիւնոյ երսուն
 տարի անցած է. ու աս միջոցիս մէջ շատ
 հետաքրքիր և մարդասէր անձինք ամէն
 կողմէն այցելութեան երթալով աս դաղթա-
 կան երևելի ժողովուրդին, միաբերան վը-
 կոյութիւն կուտան անոնց առաքինութեա-
 նը համար, ու անոնց երջանկութիւնը և
 յաջողութիւնը կըստորագրեն: Աւ ասոնք
 են Մատուածաշնչի պտուղները, ան սուրբ
 Վրքին՝ որ ոմանք կըջանան արդիլէլ և
 ջերմութեամբ հասարակութեանը որ կարգան,
 հաստատուելով թէ հասարակ մարդիկ ան
 սրբազան Վիրքը բանան նէ զանազան մոլո-
 լութեանց մէջ կիյնան: Բայց ահա հոս

տեղ յայտնի կըտեսնեմք որ աւազակները՝
 հեթանոսները և անոնց վատաղքի սերունդը
 աս Վիրքը կարգալով՝ լուսաւորեցան ու բա-
 րեպաշտ և երջանիկ ազգ մը եղան: Մն-
 շուշտ բովանդակ աշխարհի մէջ աս նոյն
 արդիւնքը կունենայ Մատուածաշունչը, թէ
 որ ամէն տեղ տարածուի ու զիւրիմաց
 լեզուով մը ամէնուն հետ խօսի:

Օ՛րհանգիստ կրօնին ծանրալիւնը:

Ի՞նչ է շատերուն կրօնքը: Ի՞նչք բունի զօ-
 րութեամբ շարժուած մեքենաներուն կընմանին.
 սիրտերնին կրօնքին հետ կապուած չեն. վասն
 որոյ իրենց ամէն կրօնական արարողութիւնները
 ծանր պարտաւորութիւնի մը պէս կըկատարեն:
 Ի՞նչք ևս առաւել պիտի սիրէին զՄատուած,
 թէ որ անիկայ բոլորովին ազատ թողուր զանոնք
 ան նողկալի պարտաւորութենէն: Արշափ ատեն
 որ կրնան աս պարտաւորութիւնները զանց կը-
 նեն, գծկամակութեամբ կըմտանան անոնց և
 կըջանան թէթեցընէլ, և թէ որ իրենց պար-
 տաւորութիւնները բարձի թողի ընելուն հա-
 մար պատճառ մը գտնեն շատ կուրախանան:
 Արբոր անոնք աս կրօնքին գերութեանը մէջ կը
 շարշարին, կըսկսին ծանր խորհուրդներ ունե-
 նալ իրենց անգութ Ռանաւորին վրայով, որ ա-
 սանկ դառն աշխատութիւններ կըգնէ իրենց
 վրայ, և կըսեն՝ Ա՛րբ պիտի ըլլայ որ աս կրօնա-
 կան գերութենէն ազատիմք, և աս աշխարհիս
 վայելչութիւններով ուրախանամք: Մսիկայ է
 ճշմարիտ կրօնքը. ասոր մէջ անասնկ բան մը կայ
 որ հաճելի ըլլայ Մատուծոյ:

Վարդայի մարդասէր սրբինը:

Ի՞նչածները համառօտ տեղեկութիւն մը
 տուինք շօվարտի մարդասիրական գործ-
 քերուն վրայով՝ որոնք բոլորովին բը-
 րիատոնէական ճշմարիտ հաւատոյ պտուղ-
 ներն էին. բայց շօվարտ այր մարդ ըլլա-
 լով՝ արիութիւնը և զօրութիւնը բնական
 էին իրեն: Վասն որոյ ցուցընելու համար
 թէ Մատուածաշնչի անգութութիւն կընայ
 ընէլ նաև կանանց վրայ, այս անգամ մեր
 բանասէր ընթերցողներուն կըմատուցանեմք
 հետեւեալ կարճ պատմութիւնը բարեպաշտ
 տիկինին վրայ, որ մօտ ատեններս մեռաւ
 Մնգղիայի մէջ:
 «Վարդայի ծնաւ պատուոյ և հարստու-
 թեան մէջ. դեռ տանրութը տարին
 չմնացուցած աղքատներուն և տգէտներուն
 վրայ կարեկցութիւն զգաց իր սրտին մէջ:

Ուստի տղայոց և աղջկանց համար դպրատուն մը բանալով իր հօրը տանը մէջ՝ շուտով ութսուն աշակերտ ժողովեց և անխոնջ ջանքով աշխատեցաւ որ կրթէ զանոնք : 1800ին՝ ամուսնացաւ Պրայ անուն խիստ ընչաւէտ ազնուականի մը հետ . և այսպէս առջինէն աւելի ընդարձակ միջոցներ ունեցաւ մարդոց օգուտ ընելու :

«Արդ աս ազնիւ տիկինը՝ իր ամուսնանալէն ետքը սկսեց հռչակաւոր օվարտի օրինակին հետեւիլ . լրաժ էր որ Անտրայի՝ Նիւ Կէյթ ըսուած մեծ բանտին մէջ զանազան յանցանքով բանտարգուած՝ բազմաթիւ կանայք և տղայք կը գտնուին խիստ թշուառ վիճակի մէջ : Ահա՛նք տիկինը երազնաց ան բանտը, ան միտքովը՝ որ բանտին մէջի թշուառութիւնները անձամբ տեսնէ, բանտարգեալներուն խղճութիւնը թեթեւցունէ և անոնց վարքը ուղղէ : Արտաւ ան տեղը ուր հարիւրէն աւելի ողորմելի և յուսահատեալ կնիկներ մէկ տեղ կը կենային, և իր ազնուական երեւոյթովը ու քաղցր դէմքովը շուտով սիրելի երեցաւ ամէնուն : Արքոր Տիկինը սկսեց խաղաղութեան, միթարութեան և յուսոյ խօսքեր ըսել անոնց, ամէնն ալ զարմանքով մտիկ ըրին . քանզի անկէց առաջ բնաւ գտած չէին ասանկ մէկ բարեկամ մը : «Աուգամ ձեզի (ըսաւ բարեսէր տիկինը նոյն ատենը անոնց Մտուածաշունչ մը ցուցնելով) անոր համար որ աս Վիքթըր կառաջնորդէ ինձի՝ ձեզի դալու . ձեզի համար ձեռքէս եկածը պիտի ընեմ, բայց պէտք է որ դուք ալ օգնէք ինձի» : Ընտանը բացաւ Սուրբ Վիքթըր, և անկէց գլուխ մը բան կարգաց ան ապերջանիկ յանցաւորներուն՝ որոնցմէ շատերը մինչև անատենը բնաւ լրաժ չէին Մտուածոյ խօսքը : Բարեպաշտ տիկինը քիչ ժամանակի մէջ իր փափաքները յաջողուած տեսաւ . նախ՝ դպրատուն մը բացաւ բանտին պատնէշներուն մէջ, ապա՝ քսանըջորս բարեպաշտ տիկիններ համոզեց՝ որ իրենց մէջ ընկերութիւն մը հաստատեն բանտին կարգադրութեանցը հոգ տանելու համար, և իրենց տեսչութեան տակը ունենան յանցաւորներէն մէկը՝ որ հոգաբարձու կոչուելով, միշտ խնամք տանի ուրիշներուն վրայ : Ասկէց ետքը բանտարգեալները կառավարելու համար կանոններ ալ գրեց, զորոնք լորտ Սայօր ըսուած Անտրայի ընդհանուր կառավարին ներկայութեանը կարգաց բանտին մէջ եղողներուն : Տիկինը աս բոլոր կանոնները կարգալէն ետև հարցուց անոնց՝ թէ կը խոստանան ան կանոններուն հնազանդելու . ամէնը մէկէն մարբերան գոչելին թէ յօժար սրտով կը հնադրանդին :


«Բայց աս արժանագով տիկինը իր մարդասիրական ողորմութիւնները միայն Անտրայի աս բանտին ցուցնելու բուական չսեպեց՝ շատ օգնութիւն ըրաւ նաև խիստ հռչակաւոր տեղերու բանտերուն ալ, որոնց շատերը՝ իր խնամքովը մոլութեանց բնակարաններէն փոխուեցան ապաշխարանաց օթեաններու և ճարտարութեան դպրոցներու :

«Բրուսիայի Թագաւորը մօտ ատեններս Մեզդիա երթալուն՝ աս տիկինին ընկերութեամբը Նիւ Կէյթ բանտը տեսնելու գընաց : Մեզդիայի Թագաւորներն ալ շատ անգամ մասնաւոր պատիւ ցըրուցին անոր : Բայց ասոնցմէ ամենէն մեծ մէկը պիտի պատուէ զանիկայ վերջին օրը . այսինքն Թագաւորաց Թագաւորը . «Բանտի մէջ էի և դուն ինձի եկար» : «Ղշմարիտ կրօնքեզի որովհետև աս իմ խեղճ ապաշխարող քոյրերուս ըրիր, ինձի ըրիր» : Սուրբ . ին . 36, 40 :

Ղշմարիտ կրօնքի նշանը :

«Ահատէ աշխարհիս վրայ եղած բոլոր սնտի կրօնքները : Ընտք ամենեւին մարդուս բնութիւնը չեն փոխեր, այլ կը թողուն զանիկայ իր առջի ապականեալ վիճակին մէջ . անոնք մարդուս սխալմունքներուն և կիրքերուն կը յարմարին, և անոր նմանութեանը համեմատ շինուած են : Իսկ ընդհակառակն ճշմարիտ կրօնքը մարդուս բնութիւնը կը փոխէ, և զանիկայ իր նմանութեանը կը համեմատէ : Քրիստոսի Մեծատարանը՝ փոխանակ շողոքորթելու, կիմացունէ մարդուն՝ թէ բան մը ըլլալէք չունի քանի որ ինքը իր եղածին պէս կը մնայ . թէ աս իր հիմակուան վիճակին մէջ անկարող է կրօնքին պարտաւորութիւնները կատարելու և անոր բերկրութիւններուն համը տանելու . թէ ինքը պարտի փոխուել, և թէ ոչ՝ «չկրնար մտնել Մտուածոյ Թագաւորութեանը մէջ» : Էջ . 7 . 5, 7 :

Ուրքով ճամբորդութեան մէջ՝ ուրախ ընկեր կառք մը կաժէ :



Վոնոր, Հարապի Մերկոյն մեզ:

Մտեսակ անգղը բոլոր ուրիշ թռչուններէն բարձր կըթռչի: Երբեմն ծովին երեսէն մինչև չորս մղոն բարձր կեղէ, ու խիստ բազմութեամբ կըբնակի Մոզէսեան բարձրաբերձ ու ձիւնապատ լեռները: Իր վայրագութիւնը և ոյժը աւելի համբաւաւոր

է քան թէ իր մեծութիւնը, ինչու որ իր երկայնութիւնը՝ թեկը բանալով մէկ ծայրէն մէկալ ծայրը միայն ինը ոտքի չափ է: Մտնք անանկ ուժով են՝ որոնց երկուքը մէկ տեղ վայրի եղջերուի վրայ յարձակելով կրնան որսալ զանիկայ: Երբեմն կը

յարձակին նաև երնջի վրայ, որուն ետեէն կիյնան երկան ատեն, վերաւորելով զանկէայ իրենց կտուցովը ու մազիլովը՝ մինչև որ կենդանին՝ ալ շունչը կտրելով ու քաշած չարչարանքներէն յաղթուելով, զուրս կը ձգէ լեզուն ու կը բառանչէ : Ըն ատեն անգութ Գօնտորը կը յափշտակէ անոր լեզուն՝ որն որ շատ ախորժեղ կերակուր է իրեն . նաև կը պատուէ կը հանէ իր որսին աչքերը, անանկ որ կենդանին կիյնայ գետինը ու կը մնանի : Բուրդօի սահմանին մէջ աս ահաւոր թռչունին արջառնեցուն տուած վնասը՝ հաշիւի տակ չմտնէր : Ըն զի զանայի մարգագետիններուն վրայ, ծովին երեսէն տասներկու տասնիրեք հազար ոտքի չափ բարձր, շատ հեղ աս թռչունէն կը լանակնին վերաւորուած եզներ կը գտնուին :

Կերենայ թէ Գօնտոր աւելի դժուարաւ կը սպանուի բան թէ ուրիշ որսական թռչունները : Ըն մարդ ներկայ գտնուեցաւ աս թռչունին վրայ եղած քանի մը փորձերուն : Ըն աջ փորձ մը ըրին խեղդելու զանկէայ . կապ մը ձգելով իր վիզը՝ ծառէ մը վար կախեցին, ու քանի մը բոպէ ասդին անդին քաշեցին ոտքերէն : Բայց հազիւ թէ քակեր հաներ էին կապը, սկսեց քալել իբր թէ բան մը չէին ըրեր իրեն : Իրեք ատրձանակ պարպեցին անոր վրայ՝ չորս քայլի չափ հեռաւորութենէ . զնտակներուն ամենն ալ մարմնոյն թափանցեցին, ու պարանոցէն կուրծքէն և փորէն վերաւորուեցաւ, բայց տակաւին ոտքի վրայ կեցած էր : Ըն զերբորդ ատրձանակ մը պարպուեցաւ դէպի ազգրի ոսկորին . բայց զընտակը աւանց ներս թափանցելու ազգրին զարնուելով ինկաւ : Ըն անկ անհամար վերքեր ընդունելէն ետքն ալ կէս ժամի չափ տակաւին ողջ էր : Կըսեն թէ Բերուի ցուրտ գաւառներուն մէջ աս թռչունը անանկ խիտ ու թանձր փետուրներով ծածկուած է, որ ութը կամ տասը ատրձանակ պարպուելուն հազիւ թէ մէկ գտնակ մը կը թափանցէ իր մարմնին :

Տեղը կըսկի փայլել երբ որ արեւը վրան կը ծագէ :

Փէշէ :

Գիտուններուն կենաց երկարութիւնը :

Առումնասէր վարքը մտաւորական աշխատութիւնը՝ վնասակար չէն մարդուս աւողջութեան թէ որ զիտէ մէկը հետեւիլ անոնց Ֆիզիզական զօրութեանց բաւական կը թուութիւնովը ու պէտք եղած աւողջութեան կանոններով : Կը կոչեն սկեցութեան օրինակները հազուադիւտ չեն գիտուններուն և փիլիսոփաներուն մէջ, ինչպէս և ուրիշ կարգի մարդոց մէջ : Պօհէրհամ 70 տարի ապրեցաւ . Կոք՝ 73 . Գալիլէոս՝ 78 . Կեւտոն՝ 85 . Գօնդընէլ՝ 100 . Պայլ, Կէիպնից, Պիւֆօն և վերջի դարուն շատ երեւելի մարդիկները որ մեր ամէն ընթերցողներուն միտքը կուգան, խորին ճերութեան հասան : Կրնամք յառաջ բերել ևս բազմաթիւ Գերմանացի գիտնականներ, որոնք զրեթէ ինչուան հարիւր տարին ապրեցան : Պլումնագաք վարժապետը մեռաւ, շատ ատեն չէ, 88 տարեկան, և ()լպէրս վարդապետը հաչակաւոր աստեղաբաշխը Պրէմ քաղաքին, 81 տարեկան :

Սերտ արեղէն . Սերտ արեղէն :

Կը հանից զսիրտն քարեղէն ՚ի մարմնոցնոցա, և տաց զսիրտ մարմնեղէն : Կըլ . Ժա . 19 :

Կըբոր մէկ քար մը աւնես և ձեռքովդ շշափես զանկէայ՝ կը տեսնես թէ ինչպէս պող է . կը զարնես՝ չգար հարուածը . վրան ծանր բեռ մը կը զնես՝ չձրնշուիր . կնիք կը զարնես՝ տպաւորութիւն մը չընդունիր . ահա ասոր պէս է դեռ Բրիտտոսի չարձողին սիրտը . ասանկ ցուրտ կարծր՝ անզայ՝ անճնշելի և աննուաճելի : Ի՛նչ մեծ ողորմութիւն է մարդուս որ աս անեծքէն ազատ ըլլայ, մարմնեղէն սիրտ ունենայ . զգալու կարողութիւն ունենայ և հողեոր զգացողութիւններ ունենայ . կենդանի ըլլայ հանդերձեալ աշխարհի զօրութիւններուն, և այլ ևս անզայ չմնայ երկնային և աստուածային բաներուն, երբոր անոնք իրեն կը մտնան :

Գիտցած եղիք, ո՛վ հաւատացեալ Բըրիտտոնայք, որ աս սրբազան զգացողութիւնները ոչ միայն ձեր բերկրալից պատճառներէն յառաջ կուգան, այլ նաև ձեր սրտմագին պատճառներէն : Ինչպէս որ

ձեր ուրախութեան արտասուքներ յայտնի կրնեն ձեր ունեցած հոգեոր զգայութիւնները, անանկ ալ ձեր տրամութեանը արտասուքը: Յաւր զգայութեան մէկ նշանը չէ՞ մի:

Արդարեւ, ճշմարիտ բրիտանացիին սիրտը «ամարմնեղէն սիրտ մըն է»:

ա. Մօտեցուր զանիկայ Լստուծոյ Բանին. շուտով կըզգայ: «Կամ սիրտս, կըսէ Գաւիթ, քու խօսքէդ կըվախնայ»: Սուրբ. ճԺԺ. 161: «Հաւատացեալը կըզողայ Տէրօջը խօսքէն» կըսէ Լստայի մարգարէն: Լստայ. կԴ. 5: Ուստի կըբանայ զանիկայ ակնածութեամբ. կըհնազանդի անոր հրամանին. անոր պահանջմունքներուն հետ շատ անգամ իր անձը կըբաղդատէ. կըկարգայ ճշմարիտ հաւատքը ուրացողներուն վարքը, և անոնց կրած պատիժները, և իր գոյնը կըշրջի. կըզարհուրի անոր մէջ պարունակուած սպառնալիքներէն, և անոր խոստմունքներուն բաժանորդ ըլլալ կըփափաքի. ո՞հ, երբեմն քանի զգածմունքներ կըպատճառէ մարդու՝ Լստուծոյ Բանին մէկ գըլուխը:

բ. Մօտեցուր զանիկայ մեղքին. շուտով կըզգայ: Ինտոր որ պղտիկ փոշի մը աչքը կընեղէ, անանկ ալ պղտիկ մեղք մը կընեղէ հաւատացեալին խղճմտանքը: Սեւած մարմինը չզգար ամենամեծ հարուածը, բայց կենդանի անձին բոլոր մարմնոյն ցաւ կուտայ ասեղին ծայրը: Երբոր ուրիշները թէպէտեւ ծանր յանցանքով բեռնաւորած, առանց զգալու իրենց մեղաւոր ըլլալը անհոգ կըկենան, ան նոյն ատենը Քրիստոնեայ անձը կըզանգատի մինչև անգամ իր թեթեւ սխարանքներէն, աղօթքի ատեն իր սրտին ցուրտ զգայումներէն և թափառական խորհուրդներէն: Իր վշտացուցած Տէրօջը միայն մէկ նայեցուածքը դուրս կըհանէ զանիկայ և դառն արցունք թափել կուտայ:

գ. Մօտեցուր զանիկայ Վախախնամական դիպուածներուն. շուտով կըզգայ: Չախորդութեան ատեն կըսէ, «Կամ մարմինս կըզողայ քու ահէդ, և կըվախնամ քու արդար դատաստաններէդ»: Իսկ թէ որ անիկայ յաջողութեան մէջ է, կըվախնայ որ չըլլայ թէ իր սեղանը որոգայթ, ու որս, գայթակղութիւն և հատուցում ըլլայ իրեն:

դ. Մօտեցուր զանիկայ Լստուծոյ անունը փառաւորելու գործին. շուտով կըզգայ: «Յուրերու առուններ կըվաղին իմ աչքերէս, ինչու որ մարդիկ քու օրէնքդ չեն պահեր»: Սուրբ. ճԺԺ. 136:

ե. Մօտեցուր զանիկայ մարդոց կարօտութեանը. շուտով կըզգայ: Կացողներուն հետ կուլայ. նեղեալներուն կարեկից կըլլայ, իբր թէ ինքն ալ անոնց նեղութեանը մասնակից է. (Լբ. 47. 3.) ո՞վ կըհիւան զանայ ու ինքը չհիւանգանար. ո՞վ կըզայթակղի ու ինքը չայրի. դիւրագգած սիրտ մը միշտ իր հետը ունի դիւրագգած ձեռք մը և դիւրագգած լեզու մը:

Նոյն- Բնութիւններուն Բազմալի-նը:

Ը. Գրէնլանտիայի ծովերուն քանի մը կողմերը այնքան շատ է փոքրիկ ծովաթաղանթներուն թիւը, որ եթէ բթաչափ խորանարդ մը ըստ գիւպայ առնուի՝ վաթսուներ չորս հատէն պակաս չըլլար: Եւ պա ուրեմըն մէկ ոտնաչափ խորանարդը՝ 110,592 հատ կըպարունակէ. և թէ որ մէկը մղոն խորանարդ առնելու ըլլայ ան ճճ ինեղէն այնքան կըբազմանայ անոնց թիւը, որ եթէ կարծեմք թէ մէկը կարող ըլլայ շաբաթը միլիոն մը համրելու, հարկաւոր էր որ աշխարհքի սկիզբէն մինչև հիմայ 80,000 հոգի աշխատէին աս հաշիւը ընելու համար:

Բ. Քամագողքայի ձկնորսութեան եղանակին ատեն մը կուգայ, որ ծովու խորշերուն ու գետերուն մէջ այնքան կըշառնան Սալմոն ըսուած մեծ ու երեւելի ձուկերը, որ արջերը առանց դժուարութեան կորսան զանոնք, ու միայն անոնց գլուխը և թիկունքը կուտեն, գէթ որչափ ատեն առատութիւնը կընեղէ որ իրենց ախորժակին հետեւին: Իոյց երբ որ աս ձուկերը կըբիչնան, անատենը ալ այնչափ փափկութիւն չեն ցուցնէր: Քամագողքայի բնակիչները կըսեն, թէ միայն մէկ արջ մը մէկ գիշերուան մէջ կընայ քսանը հինգէն մինչև երեսուն հատ բռնել ան ձուկերէն:

Շատ անհիմն տիկնայութիւններէ և աստագանքէ ազատ կըմնայ ան որ պարզ մտք իր ուրիշներուն ունեցած պարտաւորութեանը վրայ աւելի հոգ կըսանի, քան թէ ան բանին որ ինքը իրաւունք ունի անոնցմէ սպասելու:

Գաղ ղեայի մէջ գործուած ոճիրները :

Գաղ ղեայի պատմագիր մը շատ զգուշութեամբ բրած է աս հեռեեալ վիճակագրութիւնը :

Գաղ ղեայի ատենակալաց ժողովը ամէն տարի գրեթէ եօթը հազար ոճրագործներու դատաստան կրտեսնէ ; որոնք կամ անձանց ղէմ եղած յանցանքներու համար ամբաստանուած են և կամ ընչից վրայ :

Ընձանց վրայ եղած ոճիրները՝ բովանդակ յանցանքներուն բաւոր դասէն աւելի են ; և երրորդ մասէն պակաս :

Գաղ ղեայի մէջ գրեթէ օրը երկու կամ մուտ մարդասպանութիւն կը գործուի :

Հարուածները և վէրքերը անձանց վրայ եղած ոճիրներուն մէկ քաւոր դասը կը համարուին :

Գողութեան յանցանքներուն թիւը միշտ աւելնալու վրայ է : Ըստ մոլութեան առաւելութիւնը կրտեսնուի ան ամէն երկիրներուն մէջ ուր որ վաճառականութիւնը և ճարտարմտութիւնը շատ առաջ կերթան . «Արք որ մեր վաճառականութիւնը կիսով չափ կաւելնայ ; կըսէ Ընդհայի վիճակագիր մը ; ոճիրներն ալ քաւապատիկ կը բազմանան :

Յանցանքներու առաւելութեան ամենէն ստոյգ նշաններուն մէկն ալ աս է որ գողութեան ոճիրներու համար դատաստանուած երիտասարդներուն մէջ՝ կը կեն յանցանք գործողներուն համեմատութիւնը միշտ կաւելնայ :

Բանտերէն ելող վերստին յանցանք գործողներուն թիւը շատ աւելի է քան թէ թիոյ՝ ծառայութենէն ելողներունը :

Ընձանց ղէմ եղած ոճիրներէն հարիւրին ութսունը վեցը այր մարդիկ կը գործեն ; և տասնէ չորսը կանայք : Աոյնչափ գողութիւններու մէջ ալ եօթանասուն և ինը այր մարդիկ կը գործեն և քսանը մէկը կանայք :

Հարիւրին վեցէն աւելի կանայք անձանց ղէմ ոճրագործ են թոյն տալով անոնց . իսկ արք միայն հարիւրին մէկ :

Ընձանց ղէմ եղած եղիւնագործութեանց մէջ տղայասպանութիւնն է ; որ կանայք յաճախակի կը գործեն :

Ընտանի գողութիւնները՝ կանանց բրած Բ. Է. Է. :

գողութիւններուն երկու հինգերորդ մասը կը կազմեն ; բայց մէկ հինգերորդ մասը անգամ չեն բլար այն գողութիւններուն որոնցմով այր մարդիկ յանցաւոր կը համարուին : Ըստ տարբերութեան պատճառը աւանց երկրայութեան աղախիններուն խիստ բազմութիւնը բլարն է ; ծառաներէն աւելի :

Քսանը հինգ և երեսուն տարուան հասակին մէջն է որ արք և կանայք աւելի շատ ոճրագործութիւն կընեն :

Եղիւնագործութեան յօժարութիւնը աւելի կանուխ արանց վրայ կը տիրէ ; քան թէ կանանց . բայց աս յօժարութիւնը այր մարդոց վրայ աւելի արագ կը տկարանայ : Յիսներորդ տարիէն սկսեալ մինչև կենաց վախճանը ; եղիւնագործութեան հակամիտութիւնը միւսնոյն կը մնայ երկու սեռին վրայ ալ :

Մարդոց վրայ գործուած ոճիրներուն թիւը աւելի շատ է ամառ ատեն քան թէ ձմեռուան մէջ . ասոր հակառակ գողութեանց թիւը ձմեռ ատեն շատ է քան թէ ամառուան մէջ : Գարնան ու աշնան մէջ գործուածները գրեթէ հաւասար կուզան :

Գաղ ղեայի հարաւային կողմը աւելի եղիւնագործութիւններ կընեն անձանց վրայ ; և հիւսիսային կողմը աւելի ընչից վրայ . իսկ կեղրոնական մասին մէջ՝ աս երկու ոճիրն ալ քիչ կը գործուի :

Պարին գրեթէ երկու հազարի կը հասնի անձնասպանութեան թիւը Գաղ ղեայի մէջ . աս մեղքը հիւսիսային կողմը շատ կը գործուի :

Որչափ աւելի մօտ են նահանգները՝ թէ Փարիզի և թէ Մարտիլիայի (կամ հաւանաւ կանաբար ամէն մեծ քաղքներու) այնչափ աւելի բազմութիւն են անձնասպանութիւնները :

Ըն նահանգներուն մէջ ուր որ աւելի մարդ մեռցընելու ոճիրը կը գործեն ; ընդհանրապէս հոն տեղուանքը շատ քիչ անձնասպանութիւն կը բլար :

Մեր կարծիքները կընմանին մեր ժամացոյցներուն ; որոնց մէկը ճիշդ հաւասար չքալի միւսին ; և սակայն ամէն մարդ իրենը շիտակ կը կարծէ :

Լսողականությունը :

Որպես ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ և ուսուցանել զձեզ հրապարակաւ և առանին . Տալ վկայութիւն չըկեց և չեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Մտուած , և զհաւատոցն՝ որ ՚ի տէր մեր Հիսուս Քրիստոս : Գործ . Ի . 20 , 21 :

Ինտոր օգտակար եղած բաներէն ոչ մէկը ձեզի իմացունելէն և հրապարակով և սուսնէ ՚ի սուսն ձեզի սորվեցունելէն ետ չկեցայ . վկայելով չըէաներուն և չեթանոսներուն՝ ապաշխարութիւն դէպի Մտուած , և հաւատք դէպի մեր Տէր Հիսուս Քրիստոսին :

(Հոյն Ռնագիրէն) :

Պօղոս առաքեալին առ խօսքերէն կրտորվինք . 'Սախ' թէ առաքեալները փրկութեան համար ամէն հարկաւոր եղածը քարոզեցին , և բան մը չեթողցին իրենց յաջորդներուն ետքէն աւելցնելու . վասն որոյ որ և իցէ տանն առաքելոց քարոզած և սորվեցուցած բաներուն վրայ եղած բոլոր յաւելուածները պէտք է որ անօգուտ սեպուին :

Երկրորդ՝ Լս խօսքերուն մէջ առաքելոց քարոզութեան բովանդակութիւնը ունիմք . այսինքն՝ Լսաշխարութիւն և շաւտք . ահա ստոնք են ան զխաւոր պայմանները որ մեր փրկութեանը համար պարտաւոր եմք կատարելու :

Երրորդ՝ շոս կրտեսներն նաև թէ անոնք մի և նոյն բանը քարոզեցին շրէաններուն և շեթանոսներուն , թէ և առջինները ճշմարտին Մտուածոյ երկրպագողներ էին , և վերջինները կրապաշտ . որովհետև ան ժամանակի շրէայք Մտուած պաշտութեան երևոյթը միայն ունէին , քայց անոր ճշմարտութիւնը մերկացած էին և կոտց երկրպագողներուն հետ կըհաւասարէին : Սասն որոյ Լսաքեալը հարկաւոր սեպեց շրէաններուն քարոզել ան նոյն վարդապետութիւնները որ քարոզեք էր շեթանոսներուն :

Ռնագրանին խօսքերուն մէջ մասնաւորապէս յիշուած են երկու պարտաւորութիւններ , առանց առաջինը կրցուցուի թէ յատուկ վերաբերութիւն ունի առ Մտուած , և երկրորդը՝ առ Քրիստոս . ինչու որ մենք Մտուածոյ օրէնքը անարդելովնիս մեղապարտ եղանք և բարկութեան ներքևը մնացինք , ուստի Մտուած՝ համօրէն տիեզերաց ամենակալ Տէրն ըլլալովը , իրեն դէմ ըրածնուս համար կրպահանջէ մեզմէ ապաշխարութիւն , իբրև մեկ պայման մը հաշտութեան : Լսոյց որովհետև լոկ ապաշխարութիւնը որչափ որ անկեղծ ըլլայ , մեր փրկութեանը համար բաւական չէր կրնար ըլլալ թէ որ Քրիստոս իր վրայ չառնէր մեր բնութիւնը և մեր մեղքերուն համար չարչարանք չկրէր , անոր համար պէտք է որ միշտ հաւատքով նայիմք անոր , որ ինքը մարդոց և Մտուածոյ մէջ տեղը միջնորդ ըլլալովը՝ մեր փրկութեանը հեղինակն ըլլայ :

Լսոյց արդ՝ աւելի ուշադրութեամբ նայիմք թէ ինչ կրնչանակէ "դէպի Մտուած ապաշխարութիւնը" :

Իմ . 'Սախ առաջին' "դէպի Մտուած ապաշխարութիւն" կրնչանակէ ընդդէմ Մտուածոյ գործուած մեղքերուն զգացումը : Լնգեղջ մարդիկ չեն իմանար իրենց մեծ մեղաւոր ըլլալնին , կամ իրենց եղևնագործ ըլլալնին իմանան ալ նէ՝ չեն զգար թէ ան պատճառովը արժանի են չարաչար դատապարտութեան : Լսոյց պարտիմք դիտնալ որ Քրիստոս չէ թէ արգարները կանչելու եկաւ , հապա մեղաւորները ապաշխարութեան . և հանգստութիւն կրնչորհէ անոնց որ իրենց մեղքին ծանրութիւնը զգալով անոր կրդիմեն : Ստալ . Ժ Թ . 28 : Մտուածոյ առջևը "ամէն ալ մեղանչեցին" , և ան անձը որ կրտէ թէ մեղք մը չունի , սուտըրուց կրնէ Մտուած . (Թ Գ Թ Թ . 10) և Քրիստոս կրտէ՝ " թէ որ չապաշխարէք ամէնքդ ալ պիտի կորնչեք " : Մտա ուրեմն յայանի է որ մէկը կարող չէ ապաշխարել կամ թողութիւն ընդունել , թէ որ իր մեղաւոր ըլլալը չիմանար :

Սեղաց ճանաչումը պէտք է որ միշտ ճշմարիտ ապաշխարութեան դուռը բանայ : Լստ ուրում շոգուոյն Սրբոյ աշխարհ զալուն առաջին գործն էր յանդիմանել աշխարհս մեղաց համար : Հ Թ Թ . Ժ Գ . 8 : Սաքսաւորը զգացեր էր այսպէս յանդիմանութիւն մը երբոր ըսաւ , " Մտուած քաւեալ զիս զմեղաւորս " , և նմանապէս անառակ որդին , որ ըսաւ , " շայր մեղայ յերկինս և առաջի քո " . սասնկ էր նաև Վաւթի զգացումը որ ատեն ըսաւ . " Քեզի , միայն քեզի մեղանչեցի , և քու աչքերուդ առջևը չարութիւն ըրի " :

Ի . " Լսաշխարութիւն դէպի Մտուած " կր նշանակէ խոստովանութիւն մեղաց առ Մտուած : " Լն որ իր մեղքերը կրծածկէ . յաջողութիւն չգաներ , իսկ ան որ կրխոստովանի և կրծրդէ զանոնք՝ ողորմութիւն կրգանէ " . (Լ Թ Թ . Ի Թ . 13) և Վաւթի կրտէ . " Վամ մեղքերս քեզի յայտնեցի , և իմ անօրէնութիւնս չձածկեցի . ըսի թէ՛ Տէրոյն պիտի խոստովանիմ իմ մեղքերս , ու դուն թողուցիր իմ մեղքերուս անօրէնութիւնը " : Ստալ . Լ Թ . 5 :

Լսոյց ան մինչև անգամ մարդոց օրէնքին նայելով . երբոր մէկը ուրիշ մէկուն դէմ յանգանք կրգործէ , բնաւ հաշտութիւն չըլլար մինչև որ յանցաւորը իր յանգանքը չխոստովանի : Լս թէ որ պարտաւոր եմք մեկ մէկու դէմ ըրածնիս խոստովանել , (Հ Թ Թ . Ե . 16 .) ուրեմն երբոր Մտուած

ուած կրպահանքէ մեզմէ որ իրեն դէմ գործած մեղքերնիս խոստովանիմք, պարտիմք չմերժել զանիկայ անիրաւ պահանջմունք մը համարելով :

Եւ արդարեւ որ ատեն ուղիղ սրտով կը խոստովանիմք մեղքերնիս Մատուցոյ առջևը, արդարութիւնը Մատուցոյ կուտամք և ամօթը վրանիս կառնեմք : «Վանիէլ կըսէ . «Ո՛վ Մատուած արդարութիւնը քուկինդ է, և մեղի աճօթ երեսաց» (Վան . Թ . 7 .) և «Վաւիթ կըսէ . «Որ արդար ըլլաս խօսքիդ մէջ և անարատ դատաստանիդ մէջ» : (Սաղ . ԺԹ . 4 .) բայց սակայն հպարտ սիրտը չուզէր խոնարհութեամբ խոստովանիլ իր մեղքերը : Սարգ ամէն բան դիւրաւ կընէ, բայց չկամենար հուանութիւն տալ՝ թէ ինքը անարգ և ամօթալից գործ մը ըրած է Մատուցոյ կամ մարդոց առջևը :

Յիրաւի Մատուցոյ առջևը գալով մեղքը խոստովանիլը դժուարին բան մը չէ . բայց սակայն որչափ անձինք աս բանը կընեն և յետոյ իրենց գործերովը կը ցուցնեն թէ ըսածնին չեն զգար . և յանցանքը վրանին չեն առներ : Թէ որ մէկը խոստովանի իր ողորմելի մեղաւոր մը ըլլալը, և սակայն առանց պատկառելու՝ կամ զղջալու իր յանցանքը, անանկ ընթացք մը բռնէ թէ ինքը բնաւ գէշ բան մը ըրած չէ, անշուշտ կիմացուի որ իր խոստովանութիւնը ոչ ճշմարիտ է և ոչ Մատուցոյ առջևը ընդունելի :

7 . «Վեպի Մատուած ապաշխարութիւն» կը նշանակէ Մատուցոյ դէմ գործուած մեղքերուն վրայ տրամուծիւն : «Վաւիթ կըսէ . «Վնչու որ անօրէնութիւնս պիտի պատմեմ, ու մեղքիս համար հոգ պիտի ընեմ» : (Սաղ . ԼԹ . 18 : «Լըբանի սգաւորներուն» ըսաւ Վրիստոս . (Սաղ . ԼԹ . 4 .) և «Սողոս կըսէ, «Մատուցոյ ուղածին պէս եղած տրամուծիւնը՝ ապաշխարութիւն մը կը դործէ փրկութեան համար» : Թեկոթն . Է . 10 :

Մատուցոյ ուղածին պէս տրամուծիւնը՝ ճշմարիտ ապաշխարութեանը հարկաւոր եղածներուն զխաւորներէն մէկն է, և արժանի է յատուկ դիտողութեան : Եւ տրամուծիւնը յառաջ կուգայ երբոր կը զգամք որ մեր չարութիւնովը մեղանչեր եմք մեր երկնաւոր Զօրը սուրբ կամքին դէմ, և մանաւանդ երբոր տեսնեմք մեր ապերախտութիւնը իր անպատմելի ողորմութեանը դէմ որ ցուցուց մեզի, իր սիրելի որդին մեր մեղքերուն համար շնորհելով : «Մատուցոյ քաղցրութիւնն է որ մեզ դէպի ապաշխարութիւն կառաջնորդէ» . Նաղ . Թ . 4 : Եւ տրամուծիւնը շատ տարբեր է ան տրամուծենէն որ առաջ կուգայ պատժոյ եր-

կիւղէն, քանզի աս ետքինը բոլորովին անձնասիրական զգայութիւն է և Մատուցոյ հետ բան մը չունի . վստահօրոյ ճշմարիտ ապաշխարութեան չտառջնորդէր : Մտանց երկրայութեան Մատուցոյ ուղածին պէս տրամուծիւնը ան է որ կը ծագի սրտին մէջ երբոր կը զանաւամբ կընայիմք մեր առջի «չար ճամբաներուն և գէշ գործերուն վրայ», և ոչ ան՝ որ կը ծագի գալու պատիժին նայելէն : Ճշմարիտ ապաշխարողը անոր համար կը քրտմի որ ինքը մեղաւոր է, և չէ թէ անոր համար որ Մատուած մեղաց դէմ վրէժխնդիր է :

8 . «Չորորդ» Մաշխարութիւն դէպի Մատուած կը նշանակէ մեղքը թողուլ և Մատուցոյ դառնալ : «Որ զեղջի դան, ու կենդանի Մատուցոյ դառնան, ապաշխարութեան համար արժանի գործեր գործեն» : Վարժ . ԻԿ . 20 : Մտանկ կըսէ նաև Սարգարէն . «Թող ամբարիշտը թողու իր ճամբան, և անօրէն մարդը իր խորհուրդները, և թող դառնայ Տէրօջը . ու անիկայ պիտի ողորմի անոր» : Վարժ . ԺԵ . 7 : Սեղաց զգացումը և տրամուծիւնը որ աստիճան եղած ըլլայ, ճշմարիտ ապաշխարութիւն չկուցուիր թէ որ անիկայ կենաց նորոգութեան շառաջնորդեր : Թէ որ ստոյգ զգացեր եմք թէ մեր չար ընթացքովը Մատուցոյ առջևը մեղադրանաց արժանի եմք, և անկեղծ սրտով կը տրտմիմք ասոր համար, անշուշտ բոլոր ապագայ մեղքերուն դէմ կը մտաբանիմք : Եւ անձը որ միայն իր քանի մը չար սովորութիւնները ձգելով ուրիշ նոր չարութիւններու կը հետեւի ճշմարտապէս զղջացած չէ : Վանզի երբոր ճըմարիտ ապաշխարութիւն կընեմք, Մատուցոյ կը դառնամք և բոլոր սրտովնիս կըսեմք, «Տէր Ինչ կուղես որ ընեմ» : Եւ յայտնաւոր ինչ բաները կանցնին և ամէն բան նոր կը ըլլայ : Եւ հրեշտակները կուրախանան երբոր կը տեսնեն որ մէկ հոգի մըն ալ մեղաց իշխանութենէն ազատելով երկնից ժառանգորդ կը ըլլայ :

Վարդ . ԴԵ . Եւ Մատուցոյ ինչո՞ւն ինչո՞ւն ինչո՞ւն :

Գաղ զիտյի երկուտասաններորդ Վուի Թաղաւորը բնականաբար խնայութիւնը կը քննէր . անգամ մը իր ներկայութեանը երբոր ծաղը կընէին իր աս ընութիւնը, պատասխան տուաւ և ըսաւ . «Վաւեւ կը կամիմ որ իմ պալատականներս իմ կծծութեանս վրայ խնդան, քան թէ իմ ժողովուրդներս իմ շուայութեանս վրայ լան» :

Հարուստ պարտանի ին :

Վարուստ աղնուական մը , բնաւ գործի մէջ մտած չէր , և չէր գիտեր թէ ինչ բնէ որ իր ատենը զուարճալի եղանակաւ անցունէ . ամէն տեսակ գործառնութիւններ իրեն տաղտկալի կերեւային , և գիտութիւն սորվելու համար միտք յոգնեցընէն ալ ակորժեղի չէր իրեն : Ըստիկայ ընդհանրապէս բասնըչորս ժամերուն տասը անկողինին մէջ պաւակած կանցունէր , քանի մը ժամ ալ իր շքեղ կառքին մէջ թմրած մնալով , և մնացած ժամերուն մեծ մասն ալ իրիկունները իրեն պէս աղնուականներուն ընկերութեամբը ուտել խմելով կրվասնէր : Ըստ ընթացքովս տասը տարի անցուցած էր , ինքը անձնիչխան ըլլալէն հետէ :

Մէկ իրիկուն մը՝ երբոր մինակ նստած կրմտածէր , յանկարծ տարօրինակ խորհուրդներ ծագեցան իր մտքին մէջ . սկսեց խորհիլ իր անցուցած կեանքին վրայով , թէ մինչև որ ան տարիքը հասեր էր , որքան կենդանիներ զոհ եղած էին իր մարմինը ապրեցունելու համար , և որչափ ցորեն ու գինի վատնուած էին անոնց հետ : Սուտի սկսեց ինքնիրեն հաշիւ բնել ինչ որ ինքը կերած էր իր անձին տէր ըլլալէն ՚ի վեր : Շաբաթէ շաբաթ , կրսէր , տասներկուրէ չափ հաւեր և ուրիշ փետրաւոր կենդանիներ , թէ մեծ և թէ փոքր իրենց կեանքը կուտային՝ որ իմ կեանքս երկարի . ասոնց թիւը տասը տարուան մէջ քիչէն քիչ վեց հազարի կրհասնի : Տարին յիսուն ոչխար և յիսուն կով ինծի համար կրմորթուէին , որ միշտ անոնց լաւագոյն մասը իմ սեղանիս վրայ զրուի :

Այսպէս տասը տարուան մէջ հինգ հարիւր կով և հինգ հարիւր ոչխար իրենց երամներէն զուրս առնուելով՝ սպանուեցան զիս սնուցանելու համար : Հարիւրաւոր խոշոր և պատուական ձուկեր կերայ , իսկ մանր ձուկերէն հազարաւոր : Գրիւ մը ցորենին ընտիր ալիւրը հաղիւ թէ բաւական էր մէկ ամիսը ինծի պաշար ըլլալու , և ասիկայ նոյնչափ ատենը հարիւր բասն գրիւ կընէ : Բազմաթիւ տակառներ գինի և ուրիշ բնական անցուցիչ մեջէն աս իմ փորս , աս անյատակ շտեմարանը ուտելիքի և բմ-

պելիքի : Եւ բոլոր աս ատենը ի՞նչ բրի ես Ըստուծոյ և մարդոյ համար : Ըստ որչափ բարիք վայելեր եմ ես՝ անարժան արարածս , որ իմ ժամանակս ոչինչ տեղը վատնեցի :

Այնքան բազմաթիւ կենդանիներ կերած եմ , որոնց ամենէն փոքրիկը իզմէն աւելի լաւագոյն հասաւ իր ստեղծուելուն վախճանին . քանզի անիկայ մարդուս բնութիւնը զօրացրնելու համար եղաւ , և այնպէս բրաւ : Ըմէն մէկ ոտորէ և ամէն մէկ ցորենին հատը՝ որ ես կերայ , արարածներու կարգին մէջ իր պաշտօնը իզմէն աւելի ճշգրութեամբ և պատուով կատարեց : Մի վամօթալից վատնումն կենաց և ժամանակի :

Վերջապէս աղնուականը աս կերպովս իր վատնած կեանքին վրայով շատ խորունկ մտածելով՝ բոլոր իր խորհուրդները այնպէս ազդուութիւն մը բրին իրեն , որ այնուհետև փոխեց իր վարքը , մէկզի ձգեց իր մոլութիւնները , և իր անձը տուաւ հարկաւոր զիտութիւնները սորվելու , թէ և ան նոյն ատենը իր հասակին երեսուն տարիները անցած էին : Ըստանկ զիպուած մը շատ քիչ կրպտտահի , և կրնամք բտել թէ հրաշք մըն էր ան : Ըրդեօք աս դարուս մէջ չկա՞ն հազարաւոր անձինք՝ որոնք իրենց կեանքը և ժամանակը կրվասնեն առանց ամենափոքր օգուտ մը ընելու մարդկային ազգին :

Գրանութի :

Տղայի ի նշուէս կեորվնի Լեւոնիէլու :

Տղայք ինչպէս որ կրտորվին լալկան ըլլալ անանկ ալ թախանձող կրլան : Տղան ինչ բան որ կուզէ ունենալ , թէ պիտանի ըլլայ իրեն՝ և թէ անպէտ , շտասկ կրվագէ իր մօրը վրայ . թէ և իր ուզածը շատ պզտիկ բան մը ըլլայ , անոր աչքին միշտ մեծ բան կըթուի , և կուզէ որոշակի և հաստատ պատասխան առնել իր մօրմէն , անանկ պատասխան մը՝ որով իմանայ իր կամքին կատարուիլը կամ մերժուիլը . և իր միտքը չհանդարտի մինչև որ վճարաբար պատասխան մը տրուի իրեն : Ըստիկայ տղայոց բնական է , և ասկէց ուրիշ կերպ զգացողութիւն չեն կրնար ունենալ : Թէ որ իր բաժնի պատասխան չտաս՝ տասը անգամ կըկրկնէ :

և եթէ քիչ մը կասկած ունենայ թէ քսան անգամ ևս ըսելով իր կամայցը հաճելի պատասխան մը պիտի ընդունի, քսան անգամ ևս կրկրկնէ խօսքը, և ասիկայ շուտով սովորութիւն կը լայ իրեն: Սակայն առաջին ըսածին վճռաբար պատասխան տուր իրեն, ալ չպարտաւորիր երկրորդ անգամ խօսքը կրկնելու. նմանապէս բնաւ մի փոխերինչ որ վճռած ես անոր թախանձանքին նայելով, անատենը կիմանայ որ իր թախանձանքը օգուտ չընէր և կը դադարի թախանձելէն: Թէ որ ատեն ունիս, և պատեհու-

թիւնը աղէկ կը թուի քեզի, աղէկ մը խնայուր անոր պարագայով իր կամքը չկատարելուդ պատճառը. բայց ասիկայ վճռելէդ առաջ ըրէ, չէ թէ յետոյ: Ընչուչու երբոր տղան փորձով տեսնէ թէ վճիռդ անփոփոխ է, քիչ անգամ կը պատահի որ վճռելէդ ետքը նորէն կրկնէ խօսքը. բու վճիռդ կը համարի հաստատ պատասխան մը. ան բանին վրայ իր միտքը կը հանդարտի, և շուտով կը պարպի մէկ ուրիշ բանի մը:

ՈՎՐԻՍՏՈՆԵՆՅ

ՄԵՏԻՆԻ ԹԵ՛Ն ԴՈՒՆ ՊԵՐՏԻՍ

ԷՅՈՐ՝

- ՉՎատուած փառաւորել: Խորհրդ. Գ. 20 և Ժ. 31. Սատթ. Ե. 16:
- Հաւատալ Փրկչին ու նմանող ըլլալ անոր: Կործ. Ժ. 31: Խորհ. Բ. 21:
- Սպաննել մարմինը՝ Հողիով: Հողիով. Ը. 13: Աղոս. Գ. 5, 6:
- Փրկել հոգիդ: Փրկել. Բ. 12, 13: Սատթ. Ժ. 26:
- Իննել Սուրբ Գիրքերը ու անոնց վրայ խորհել: Հոգ. Ե. 39: Սատթ. Խ. 2:
- Խնդրել ապաշխարութիւն և ի գործ դնել: Գործ. Ե. 31 և Գ. 19: Դուկ. Ժ. 3:
- Նուաճել շար կիրքերը: Խորհրդ. Ժ. 27: Բ. Կորնթ. Ժ. 5: Լքիւս. Գ. 31, 32:
- Փախել մեղքերէն՝ լայով ու ողորդով: Դուկ. Ե. 37, 38: Սատթ. Ի. 75:
- Խնդրել Սուրբ Հոգիին շնորհները աղօթքով ու խնդրուածքով: Փրկել. Գ. 6: Հոգ. Խ. 5, 6, 17: և Գ. 2, 3:
- Սէկ դի հանել հին մարդը՝ խաբերայ ցանկութիւնով ապականուածը: Լքիւս. Գ. 22: Հողիով. Գ. 6:
- Վրադ հագնել՝ Նոր մարդը: Լքիւս. Գ. 23—25: Խորհ. Բ. 2: Բ. Կեա. Խ. 5—11:
- Շնորհակալ ըլլալ՝ Վատուոյ իր անթիւ ողորմութիւններուն համար: Սատթ. Ժ. 12, 13 և Ժ. 1—5 և Ժ. 12—14:
- Արախանալ քեզի տրուած խոստումներէնդ և արտօնութիւններովդ: Բ. Կեա. Խ. 4: Հողիով. Ե. 1—5 և Բ. 1, 2, 14—18:
- Աստարել մարդասիրական գործքեր: Սատթ. Ի. 34—40: Գաղատ. Գ. 10: Խ. 305. Գ. 11:
- Հոգ ամենի ընկերիդ հոգևոր յառաջադիմութեանը. Հողիով. Ժ. 2: Լքիւս. Գ. 29:
- Վզթք ընել կղաղկներու և մանաւանդ հոգևոր պաշտօնաներու համար: Հողիով. Ժ. 30: Լքիւս. Գ. 18—20:
- Վախնալ աշխարհքին և նոյն ատենը յաղթել անոր: Բ. Կորնթ. Գ. 14—18. Խ. 305. Ե. 4, 5:
- Առուի սատանային հետ: Լքիւս. Գ. 12: Խ. Կեա. Ե. 8, 9: Հոգ. Գ. 7:
- Փախել դժոխքէն: Սատթ. Գ. 7, 8: Սարկ. Ժ. 43—48:
- Ստանալ դրախտը: Հոգ. Բ. 7 և Գ. 11—13 և Ի. 1—5: Խ. Կորնթ. Բ. 9:
- Վզէկ գործածել ժամանակը: Լքիւս. Ե. 16: Խ. Կորնթ. Ե. 29—31:
- Խորհել յաւիտեանականութեանը վրայ: Աղոս. Գ. 2: Բ. Կորնթ. Գ. 18:
- Պատրաստուիլ մահուան համար: Դուկ. Ժ. 20: Բ. Տիմ. Գ. 6, 7:
- Վրթուն կենալ դատաստանի օրուանը համար: Սարկ. Ժ. 37: Բ. Կորնթ. Ե. 10:

Լուսնու աստիք պարտիս կատարել, ոչ քու անձիդ կարողութիւնովդ, որ բողբոջին տկարութիւն է (Բ. Կորնթ. Գ. 5 և Ժ. 10: Հոգ. Ժ. 5. Փրկել. Գ. 13)

Իոյց